

ԹԳ.

ԳՐԻԳՈՐ ՎՐԻ. ԿԵՍԱՐԱՅԻՒ ՎԵՅՆԵՐՈՐԳ
ԵՒ ՎԵՐՁԻՆ ԱՆԳԱՄ ՄԸՆ ԱԼ
ՊԱՏՐԻԱՐԲ
(1633 — 1636)

Յակոբ քհ. Կեսարայի կ'ըսէ թէ «դարձեալ կրկին անգամ սարան ի Բիզանդիայ ՌՁԲ (= 1633) թուին բազում ֆահանայիւք եւ արժունի հրահանաւ»:

Նոյնը կը հաստատէ նաև Սաղմոսի մը յիշատակարանը, որ կ'ըսէ թէ՛ «Գրեցաւ ի թուականիս Հայոց ՌՁԲ (= 1633) ի զիտղասաղասու Իւսիւսարի, ի դռնն սուրբ Կարապետին: Էս սարին Չափարե վարդապետն մանկուդարին ստանկոյցիւք: Սուրբ Կարապետոյ ՌԲՃ դռռուշ: Իւսիւսարոյ ֆահանայք եւ ժողովուրդի ինր զնեցին զնեկեցեցին: Աշխարհ մեծ եւ շատ աղմուկ եղաւ ի մեջ սոցա: Ի թուականիս այսմիկ Կոստանդիանոյ ֆահանայք եւ ժողովուրդն մահալ եւ արժանի տեսան Կեսարացի Գրիգոր վարդապետն դեսպանօք խառուրեցին քերին Յոհան Ոսկեքերան հայրապետին արժանի արարին» (տե՛ս Տերոյենց Հայաստան, 1847, Բ. 27-80 և Ինչպէս լինեց, 1904, թ. 2324: Գր. վրդ. Գալէմքեարեան, Կենսագրութիւն Սարգիս Արեւոյ. Ի Սարգիսեան և այլն, Վրիննա, 1908, էջ 345):